

Հարց

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ որո՞նք են Էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքի գործողության շրջանակները:

Պատասխան

Էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքով սահմանվում են վերջնական օգտագործողների, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցողների, մասնավոր էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների և պետական մարմինների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորման, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի ստեղծման, զարգացման, շահագործման և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման առնչությամբ, ինչպես նաև պետական հսկողությունը և վերահսկողությունն այնպիսի սահմանափակ ռեսուրսների տրամադրման և օգտագործման նկատմամբ, ինչպիսիք են ռադիոհաճախականությունները, արբանյակային ուղեծրի հատվածները և համարները: